



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

10 դեկտեմբերի 2012 թվական N 169-Ա

ք. Հրազդան

Ժ. ՔՈԶԱՐՅԱՆՑԻ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածի և 164-րդ հոդվածի 1-ին մասի՝ **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Ալափարսի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն **Ժորժ Քոչարյանցին** տրամադրել 2012 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդի չօգտագործած մասը՝ հինգ աշխատանքային օր՝ 2012 թվականի դեկտեմբերի 24-ից մինչև դեկտեմբերի 28-ը ներառյալ:

Հիմք՝ **Ժ. Քոչարյանցի** անձնական դիմումը:

2. **Ժորժ Քոչարյանցի** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Ալափարսի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պարտականությունների կատարումը ժամանակավորապես դնել ընկերության հաշվապահ **Թամարա Նարինյանի**, իսկ բնակչության բժշկական սպասարկումը՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Չարենցավանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության ընտանեկան բժիշկ **Գայանե Աբրահամյանի** վրա:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ